ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության **«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն»** առողջապահական փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. **<u>Մրցույթը կանցկացվի 2024 թվականի հունվարի 10-ին, ժամը 11:00-ին</u>**:

3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ (արտահիվանդանոցային պայմաններում

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Ընկերության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Ընկերության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Ընկերության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Ընկերության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4. Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Ընկերության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

<u>Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 4-ը:</u>

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի շենքում (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմ (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Կենտրոն թաղամաս, վարչական շենք, Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, հեռախոս 0223 2 05 15):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

.....
Դիմողի անունը ազգանունը հայրանունը

.....
Դիմողի բնակության վայրը

.....
Դիմողի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ներկայացնում եմ իմ փաստաթղթերը ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության **«Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն»** առողջապահական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու նպատակով:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Առդիր՝ ..... էջ:

Դիմող .....
ստորագրություն

«.....» ..... 2023 թ.